ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ թվով 7 համայնքներում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 17.08.2023թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Հ գնման պայմանագրում 26.05.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՊՍ զեկուցագիր:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 4.1 կետի փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 15
17.08.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Հ գնման պայմանագրի

ք. Երևան 26.05. 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Նորաշեն» ՆՏ ԱԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **ՀՀ թվով 7 համայնքներում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման համար Կողմերի միջև 17.08.2023թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-23/1Հ գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում «29 312 400 (քսանինը միլիոն երեք հարյուր տասներկու հազար չորս հարյուր) թիվը և բառերը փոխարինել «29 692 860 (քսանինը միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր վաթսուն)» թվով և բառերով:

- ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության «4 213 000 (չորս միլիոն երկու հարյուր տասներեք հազար)» թիվը և բառերը փոխարինել համապատասխանաբար «4 593 460 (չորս միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր վաթսուն)» թվով և բառերով:

1.1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Լուսաղբյուր բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության «4 213 000» թիվը փոխարինել «4 593 460» թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047363, 900011047355, 900011047306,
900011047314, 900011047322, 900011047256,
900011047264
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Նորաշեն» ՆՏ ԱԿ
ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.